ՏԵՂԵԿԱՆՔ ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

Օ Ր Ե Ն Ս Գ Ի Ր Ք

Հոդված 171. Նպատակային արձակուրդի տեսակները

Նպատակային են համարվում՝

1) հղիության և ծննդաբերության արձակուրդը.

2) մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդը.

3) ուսումնական արձակուրդը.

4) պետական կամ հասարակական պարտականությունների կատարման համար տրամադրվող արձակուրդը.

5) չվճարվող արձակուրդը.

6) հայրության արձակուրդը÷.

7) նախընտրական արձակուրդը:

Նպատակային արձակուրդի ժամանակ պահպանվում է աշխատողի աշխատատեղը, բացառությամբ սույն օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքի:

(171-րդ հոդվածը լրաց. 24.06.10 ՀՕ-117-Ն, խմբ. 30.04.13 ՀՕ-33-Ն, լրաց. 16.09.20 ՀՕ-415-Ն)

Հոդված 176.2. Նախընտրական արձակուրդը

1. Հանրային պաշտոն զբաղեցնողներին և հանրային ծառայության մեջ գտնվող անձանց նախընտրական բարոզարշավին մասնակցելու և նախընտրական քարոզչություն իրականացնելու նպատակով տրամադրվում է չվճարվող արձակուրդ Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետով: